տականները, օրինակ եգիտները, բայց մանաւանդ հայերը, որոնք սոսկական աղանդի չեն վերածուել, այլ շարունակում են ապրել որպէս ազգ, իսկապէս որ օրէնքից դուրս են դըտնըւում: Եւրոպացու հոգեբանութեան համար անհասկանալի է — բայց փաստ է — թէ ինչպէ՛ս թուրքը կարողանում է առանց հոգեկան յուզումի խակ՝ քրիստոնեայ մորթել: Այնպիսի անտարբերութեամբ է նա քրիստոնեայ երեխաների կոկորդը կտրում, ինչպէս՝ ոչխարի կոկորդը: Քրիստոնեայ կանանց եւ աղջիկներին էլ նա անդթօրէն անպատուել գիտէ այն «բարձր» գիտակցութեամբ, թէ Ալլահին հաճելի գործ է կատարում:

Այս պայմանների տակ՝ խսկապէս հրաշք է, որ դեռ հայեր կան մեր օրերում:

Տաճկաստանում իշխող դրութեան հետեւանք էր, որ արծարծուեց հայկական հարցը:

«Ռուս կառավարութիւնը — ասում է Մ.— կրկնակի ջանքեր արաւ՝ հայերին ազատել տաճկական լծից, կամ գոնէ թեթեւցնել նրանց վիճակը: Անգլիան հրեայ Դիզրայէլիի ձեռքով պատուեց Սան Ստեֆանոյի դաշնագիրը, թէեւ նրա փոխարէն Բերլինի վեհաժողովում հայերի օգտին 61-րդ յօդուածը խմբագրուեց»:

Խոստացուած բարենորոգումները թաղելու համար՝ Աբդուլ Համիտը քրդական համիտիէները ի կեանս կոչեց եւ այդպէսով քրիստոնեաների ստրկացումը պետականօրէն կազմակերպեց: Եւ նա այդ բանում յենուեց իսլամի հովանաւոր Վիլհէլմ Բ.ի վրայ: Ապա եկաւ Ռուսաստանի եւ Անգլիայի նենդ հակամարտութիւնը:

«Սահմանադրութեան» հռչակումից յետոյ եւս, օսմանեան պետականութիւնը հաւատարիմ մնաց իր կարգախօսին — հայ որ չմնայ, այլեւս հայկական հարց էլ չի լինի: Տեղի ունեցաւ Ատանայի ջարդը: Երիտասարդ Թուրքերը 1910-ին Սալոնիկի կուսակցաժողովում դաղտնի որոշում կայացրին՝ Տաճկաստանը «մաքրել» օտար տարրերից եւ մանաւանդ քրիստոնեաներից ու զուտ ազգային- տաճկական պիտակին դարձնել այն:

1913-14-ին խոստացուած բարենորոգումներին եւս տաճիկները առանց յետին մտքերի չէին տուել իրենց համաձայնութիւնը: Այդտեղ Մարքվարտ ամենարուռն յարձակման է ենթարկում նաեւ ժամանակի գերման արեւելեան քաղաքականութեան ղեկավարներին, մեղադրելով նրանց Տաճկաստանի նենդութեանց ու հայութեան դժբախտութեանց:

Անցնելով համաշխարհային պատերազմին եւ հայկական եղեռնին, Մարքվարտ հիմնուելով բազմաթիւ վաւերական աղբիւրների եւ ականատեսների վկայութեանց վրայ՝ խստօրէն ձաղկում է ոչ միայն Տաճկաստանը, այլ եւ նրա դաշնակից Գերմանիան, ինչպէս նաեւ գերման տաճկամոլ թերթերի բռնած դիրքը:

Այդ ամենից յետոյ — ասում է Մ.— գոնէ այժմ «մենք (գերմաններս) ազնուօրէն ու անվերապահօրէն ջանանք մեր օգնութեամբ կատարուած սոսկալի եղեռնի հետեւանքները մեղմել»:

Եւ — 1918-19-ին էր այդ — Մարքվարտ առաջին հերթին պահանջ է դնում՝ Էնվէրին, Թալաաթին եւ միւս մեծ ոճրագործներին անմիջապէս արդարադատութեան ձեռքը յանձնել — Հայաստանի Հանրապետութեան եւ կամ Դաշնակիցների միջոցով:

Մեր պարզամիտ գիտնական բարեկամը — բայց ինչո՞ւ միայն նա — չէր էլ կարող այն ժամանակ մտքով անցնել, որ Վիլհէլմեան Գերմանիայից էլ հազար անգամ նենդ ու վատթար Դաշնակից պետութիւնները — Անգլիան առաջին հերթին — միայն յետագայ սակարկութեանց համար ձեռք պիտի գցէին մի շարք թուրք ոճրագործներ (Մալթա), նրանց փոխանակելու համար սեփական գերիների հետ եւ կամ պարզապէս արժէքաւորելու նրանց անձը՝ Հայաստանի եւ հայութեան հաշուին:

Ո՞րքան դատն են հնչում այսօր մեր ականջին, օրինակ, այսպիսի խօսքեր.

«Նախ եւ առաջ Դաշնակիցների — Ռուսաստանի համար պատուոյ պարտականութիւն է՝ բռնաբարուած իրաւունքը (հայոց) վերականգնել, քանի որ հայերը նրանց դրօշակի տակ են կռուել բաւօրէն: Անգլիան այդ անել պարտաւոր է մանաւանդ այն պատճառով, որ նա է ժամանակին պատռել Սան Ստեֆանոյի դաշնագիրը, որով եւ նա է Բալկաններում եւ Հայաստանում պատահած դէպքերի գլխաւոր պատասխանատուն: Անգլիայի վրայ յատկա-